ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՎԵՐ

1-ին փուլ

«ԱյԴի Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 13,

Հրավերի նկարագիր՝ մասնագիտացված՝ Դեպոզիտար և արխիվային դարակաշարերի ձեռք բերման սարքեր ներկրող կազմակերպությունները հրավիրվում են նախաորակավորման՝ Բանկի Դեպոզիտար և արխիվային դարակաշարերի ձեռք բերման գործընթացներում ներգրավելու նպատակով::

Սույն հրավերով սահմանված պայմաններին բավարարող մասնակիցները կընդգրկվեն «ԱյԴի Բանկ» ՓԲԸ նախաորակավորված մասնակիցների ցանկում և սույն հրավերի հրապարակման պահից մեկ տարվա ընթացքում ուղղակիորեն կկարողանան մասնակցել Բանկի կողմից Դեպոզիտար և արխիվային դարակաշարերի ձեռք բերման շրջանակներում կազմակերպվող մրցույթներին:

Նախաորակավորման փուլում կընդգրկվեն բոլոր այն մասնակիցները, որոնք կներկայացնեն սույն հրավերի շրջանակներում պահանջվող բոլոր փաստաթղթերը և կբավարարեն սահմանված չափանիշներին:

Հետաքրքրված մասնակիցներից պահանջվում է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը և նշված պահանջներին համապատասխանելու վերաբերյալ փաստաթղթային հիմնավորումները՝

Նախաորակավորման չափանիշներ և պահանջներ

- երեք տարիների միջին տարեկան շրջանառությունը պետք է լինի 1,000,000, ՀՀ դրամ (մեկ միլիոն ՀՀ դրամ, ներառյալ հարկերը), տրամադրել կատարված աշխատանքների հիմքեր:
- առնվազն 3 տարվա փորձ և վերջին երեք տարիների ընթացքում, տարեկան 3 (երեք) նմանատիպ ապրանքների մատակարարման հաջողությամբ իրականացված պայմանագիր, ներկայացնել պայմանագրի և մատակարարված ապրանքների ընդունման ակտի պատճենները՝ պահպանելով գաղտնիության պայմանները:
- Հարկային պարտավորությունների առկայության կամ բացակայության մասին տեղեկատվություն, որը չի կարող մեկ ամսից ավել վաղեմություն ունենալ:
- Եթե հանդիսանում է ներկրող՝ նշել ապրանքանիշը

Նախաորակավորում կարող են ստանալ մասնակից այն իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, որոնք և որոնց սեփականատերերը կամ բաժնետերերը

- ներգրավված չեն կամ ներգրավված չեն եղել սնանկության վարույթում կամ չեն հանդիսացել սնանկության վարույթում ընդգրկված իրավաբանական անձի սեփականատեր կամ բաժնետեր,
- չունեն չկատարված պարտավորություն որի գծով առկա է դատական գործ կամ հարկադիր կատարման վարույթ,
- վերջին երեք տարիներին չեն ունեցել չկատարված պարտավորություն որոնց գծով առկա է եղել դատական գործ կամ հարկադիր կատարման վարույթ,
- նրանց վերաբերյալ առկա չի եղել հարուցված քրեական գործ կամ հարուցված քրեական գործը չի ավարտվել արդարացնող ակտով:

Փաստաթղթերի ներկայացման կարգ՝

Փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով բացառապես procurement@idbank.am էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով՝ նշելով «ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ Դեպոզիտար և արխիվային դարակաշարեր »:

Հարցերի դեպքում դիմել՝ Սոնյա Ղևոնդյանին՝ հեռ. 093 04 08 08, 096 06 00 95

Ներկայացման լեզու՝ հայերեն,

ժամկետ՝ 10/01/2025թ.:

2-րդ փուլ

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ նախաորակավորումը ստացած անձանց՝ ԱյԴի Բանկ ՓԲԸ կողմից տարվա ընթացքում կուղարկվեն համապատասխան հիմքեր, աշխատանքների կատարման վայր Ատեխնիկական բնութագիր ներառող հարցումներ՝ գնային առաջարկ ներկայացնելու համար:

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ պարունակող փաստաթղթերը ներկայացվում են ծրարավորված, որը պետք է լինի սոսնձված և կնքված այն ներկայացնողի կողմից: Ծրարը և Մասնակցի կազմած փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն կազմակերպության ղեկավարի կամ վերջինիս լիազորված անձի կողմից:

Առաջարկվող գինը ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի պետք է ներառի փոխադրման (Բանկի գլխամասային գրասենյակ), ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը:

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐԸ Ներկայացնել բացառապես Սոնյա Ղևոնդյանին (կոնտակտային տվյալներ՝ հեռ 093 04 08 08)